ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«05» փետրվար 2020թ. No 435 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 28 փետրվարի 2019 թվականի N 162-Ն 30-րդ կետի, Կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0103005420 առ 22.01.2020թ. գրությունը.

0789 06 FEB 2020 09.45

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել թվով 1 դեղի հավաստագրի վերաձևակերպումը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրիելյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական

06.02.20 09.40

գրանցման մասին» թիվ N 135-Ա հրամանի 6-րդ կետի «դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից» բառերը փոխարինել «դեղի գրանցման հավաստագիրը տրամադրվում է հիմք ընդունելով ռեֆերենտ պետության կողմից սահմանված ժամկետը» բառերով:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 09-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի հետգրանցումային փոփոխությունների հաստատման մասին» թիվ 18-Ա հրամանի հավելվածի 26-րդ տողի «Հետգրանցումային փոփոխության տեսակ» սյունակի «IB» բառը փոխարինել «IA» բառով:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

05.02.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2020թ. փետրվարի 05-ի N 435 – Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՎՐԻՊԱԿՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄ)

Հ/Հ	Առևտրային անվանում	Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ	Դեղաձև	Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում)	Արտադրող ֆիրման	Երկիր	Գրանցման հավաստագրի իրավատեր	Երկիր	Բացթողման կարգ	Եզրակացության համար և ամսաթիվ
1.	Հեպարին-Բելմեդ	հեպարին (հեպարին նատրիում)	լուծույթ ն/ե և ե/մ ներարկման	5000ՄՄ/մլ; (1) ապակե սրվակ 5մլ, (5) ապակե սրվակներ 5մլ	Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, 220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս փ., 30, No 2	Բելառուս	Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, 220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս փ., 30	Բելառուս	Դ	18991 10.01.2020